

## Արձանագրություն

### Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության վերաբերյալ

29.01.2024թ., ք. Հրազդան

Սույն արձանագրությունը կազմվում է առ այն, որ 2024 թ. հունվարի 29-ին, ժամը 12:00 Հրազդանի համայնքապետարանում տեղի ունեցավ Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրային լսումներ:

Ներկայացրին՝

Հրազդան համայնքի Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանը:

Քննարկմանը մասնակցում էին՝

1. Հրազդանի համայնքապետարանից ներկայացուցիչներ
2. Բնակիչներ:

Թվով՝ 20 հոգի:

Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանը ներկայացրեց 2023 թվականի Հրազդան համայնքի 2023 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության նախագիծը՝ մանրամասն նշելով կատարված ծախսերն ու եկամուտների կատարողականները՝ հավելելով, որ համայնքի բյուջեն՝ տեղական ինքնակառավարման մարմնին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է:

2023 թվականի ընթացքում բյուջեն եկամուտների գծով կատարվել է 89.09%-ի չափով: Հրազդան համայնքի տարեկան բյուջեով 2023 թվականին փաստացի հավաքագրվել է 3 637 915 700 դրամ, որից վարչական բյուջեի մասով՝ 2 202 102 300 դրամ, իսկ Ֆոնդային բյուջեի մասով՝ 1 435 813 400 դրամ:

Սեփական եկամուտների կատարողականը 2023 թվականին կազմել է 1 637 600 800 դրամ (100.5%), որը 2022 թվականի համեմատ աճել է 31.5%-ով, ոչ սեփական եկամուտների կատարողականը՝ 2 000 314 900 դրամ: Ծախսային մասում կատարվել է 3 396 877 297 դրամի ծախս, որից վարչական բյուջեի մասով՝ 1 833 593 434 դրամի չափով, ֆոնդային բյուջեի մասով՝ 1 563 283 863 դրամի չափով:

Այնուհետև ըստ ծրագրերի հողվածների մանրամասն ներկայացվեց ծախսերի կատարողականները:

Հնչեց հարց, կապված համայնքում ֆուտբոլի դաշտերի կառուցման ու առկա դաշտերի վերականգնման հետ, որին ի պատասխան նշվեց, որ ֆուտբոլի ֆեդերացիան նախատեսում է դաշտերի նորոգման աշխատանքներ իրականացնել համայնքում՝ թվով 3 հատ, իսկ աշխատանքները կավարտվեն 2025 թվականի ընթացքում:

*Հանրային քննարկումների պատասխանատու՝*

*Համայնքապետարանի աշխատակազմի  
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝*



Ա. Եփրեմյանը

*Արձանագրող՝*

*Հրազդան համայնքապետարանի  
գլխավոր մասնագետ - զարգացման  
ծրագրերի պատասխանատու*



Վ. Բարեղամյան